

Անվանի բանասպե՞ծ Միքայել Հարությունյանը, որը մեր քնարերգության մեջ իր անուշ լարն ունի, մեծ ու անզնահապելի դեր է կարարել նաև Արցախի գրական կյանքում: Լինելով նշանավոր Արքեմ քեռու որդին, (իին սրեւիսանակերպությները քաջ գիտեն այդ անմոռաց մարդուն), նա, ուր է եղել է հեղագայում, մշտապես կապված է եղել ծննդավայր Արցախին: Արձակագիր Իսահակ Ալավերդյանի արխիվում պահվել է մի նամակ ու փոքրիկ նկար, որոնք պարմում են անցնող դարի 30-40-ական թվականներին Իսահակյանի Արցախում գրնչելու մասին, ժողովրդի կողմից նրա հանդեպ գրածվող սիրո մասին՝ դեռևս Վարպետի կենդանության օրոք: Սպորեւ գրագրում ենք այդ նամակից մի կտոր:



Վարպետը եւ Միքայել
Հարությունյանը
Մտեփանակերտում:
(Տպագրվում է առաջին անգամ)

Բարեւ Իսսեր շան:

Այս խեցըս սկսեղ, հը...

Այս ամիսն ինձ համար զգացմունքների բուժն ամիս եղավ՝ վշտի,
խնդրության, գաղտապանքի ու երջանկության...

... Ամսույս 15-ին մեր սքանչելի Թումանյանի ծննդյան 70-ամյակը
գոնեցին եւ նվասպիս է հաջողվեց ներկա լինել հանդիսավոր
նիստում: Թերթը կարդացած կլինես, մի քանի ավելորդ շաղակ-
րավություններ մի կողմ դիր, մնացածը՝ ճիշք է: Ժողովուրդը, իս-
կապես շատ է սիրում իր դարդիման երգիշներին:

Ելույթ ունեցավ նաև Վարպետը՝ Ավելիք Իսահակյանը՝ հան-
գիսդ, խաղաղ, ծանրակշիռ ու մի գեսակ ծերունի փիլիսոփայի
սրվերը դեմքին: Ելույթից հետո այնքան ծափահարեցինք...

Ես լացակումած, արցունքներս հավիկ կսպելով ծափ էի գալիս
ու միքածում՝ սա հրաշք է, իսկ Իսահակյանը, ինչպես Աբով-Լալա-
Մահարին ուղղի վրա կօրորվի, էնպես, օրորվում ու գլուխ էր գա-
լիս: Եղբայրական ազգերի պոետները շշմել էին, կարմրել, իսկ
ովքեր հասկացան ով է իրենց դեմ կանգնած, իրենք է սրբանց
ողջունեցին: Այո, Իսահակյանը մեր անցյալի իսկական պոեվիա-
յից մնացած միակ անզուգական վարպետն է:

**Միքայել Հարությունյան
1939 թիվ, Երևան**